12 հուլիսի 2012 թվականի N 841 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1905 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդվածի 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևը և դրա լրացման ուղեցույցը հաստատելու մասին» N 1905-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևի 4-րդ և 5-րդ սյունակները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Պետական գրանցման (հաշվառման) համարը	Հարկ վճարողի հաշվառման համարը
4	5

».

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված՝ նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևի լրացման ուղեցույցի 3-րդ կետի՝

ա. 4-րդ ենթակետը «գրանցման» բառից հետո լրացնել «կամ հաշվառման» բառերով և նույն ենթակետից հանել «(պետական ռեգիստրում տվյալ տնտեսավարող սուբյեկտի հաշվառման համարը)» բառերը,

բ. 6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 9-րդ ենթակետը «ուսումնասիրության» բառից հետո լրացնել «փաստացի» բառով,

դ. 10-րդ ենթակետն «ուսումնասիրության» բառից հետո լրացնել «փաստացի» բառով, իսկ «տարեթիվը» բառից հետո՝ «(Այն միջոցառումները, որոնք սկսվել են տվյալ տարվա ընթացքում, սակայն դեռ չեն ավարտվել, ներառվում են հաջորդ տարվա հաշվետվության մեջ)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: